


ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը
Նստարանի համարը



Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարքում: **Պատասխանների ճնարքի ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորը:**

Մարդում ենք հաջողություն:

1

Ինչի՞ առկայությունն է քնորոշ հատկապես կաթնասուններին.

- 1) ստոծանու
- 2) ենթաստամոքսային գեղձի
- 3) քառախորշ սրտի
- 4) միզապարկի

2

Հետևյալ կենդանիներից ո՞րն է պատկանում արմատամտրակավորների տիպին.

- 1) արմատաբերան մեդուզան
- 2) ակտինիան
- 3) պոլիպ հիդրան
- 4) բողոք

3

Թվարկված բույսերից ո՞րն ունի փնջաձև արմատային համակարգ.

- 1) ոլոռը
- 2) սոխը
- 3) լոբին
- 4) արևածաղիկը

4

Պոլիպ հիդրայի մարմնի ո՞ր բջիջներից են առաջանում նոր խայթող բջիջները.

- 1) մաշկամկանային
- 2) խայթող
- 3) նյարդային
- 4) միջակա

5

Ո՞ր կենդանիներն ունեն հիմնականում արտաքին բեղմնավորում.

- 1) ձկներն ու երկկենցաղները
- 2) ձկներն ու սողունները
- 3) թռչուններն ու կաթնասունները
- 4) երկկենցաղներն ու սողունները

6

Թվարկված կենդանիներից ո՞րը չի պատկանում ժապավենաձև որդերի դասին.

- 1) Եղան երիզորդը
- 2) Էլսինոկոկը
- 3) Արատուտը
- 4) Խոզի երիզորդը

7

Ո՞ր է անմիջապես մղվում արյունը ձկան սրտի փորոքից.

- 1) Երակներ
- 2) Աախասիրտ
- 3) Փորի առրտա
- 4) Մեջքի առրտա

8

Նշված առանձնահատկություններից ո՞րը բնորոշ չէ մողեսներին.

- 1) Եռախորշ սիրտը
- 2) հետսաղմնային զարգացումն ընթանում է կերպարանափոխությամբ՝ անուղղակի է
- 3) Աերքին բեղմնավորումը
- 4) Քոքային շնչառությունը

9

Նշվածներից ի՞նչը բնորոշ չէ քոչուններին.

- 1) Առրտայի ձախ աղեղը
- 2) Միզապարկի բացակայությունը
- 3) Առրտայի աջ աղեղը
- 4) Լոյանոցի առկայությունը

10

Զանի՞ լիտր առաջնային մեզ է առաջանում մեկ օրում առողջ մարդու օրգանիզմում.

- 1) 150-170
- 2) 120-150
- 3) 1,5-2
- 4) 2,5-2,7

11 Զարգացման ո՞ր խանգարումն է առաջանում մանկական հասակում մակուլեղի գերզործառույթի հետևանքով.

- 1) հսկայություն
- 2) գաճաճություն
- 3) թզուկություն
- 4) ակրոմեզալիա

12 Ո՞ր խմբի արյուն ունեցող մարդկանց պլազմայում α և β ազյուտինիներ չկան.

- 1) չորրորդ
- 2) առաջին
- 3) երկրորդ
- 4) երրորդ

13 Ո՞ր անոթներն են մասնակցում արյան շրջանառության մեծ շրջանին մարդու օրգանիզմում.

- 1) վերին սիներակ և թոքային զարկերակներ
- 2) ստորին սիներակ, լյարդի դռներակ և թոքային երակներ
- 3) թոքային զարկերակներ և թոքային երակներ
- 4) առտա, վերին և ստորին սիներակներ

14 Ո՞ր գործընթացն է համապատասխանում լյարդի պատճեշային ֆունկցիային.

- 1) սպիտակուցների քայքայման արգասիքներից միզանյութի ձևավորումը
- 2) լեղու արտադրությունը
- 3) ֆիբրինօգեն և պրոթրոմբին սպիտակուցների սինթեզը
- 4) արյան մեջ գլյուկոզի քանակի կարգավորումը՝ գլիկոգենի սինթեզը և քայքայումը

15 Ի՞նչ իմունիտես է մշակվում, եթե մարդու օրգանիզմ են ներմուծում պատրաստի հակամարմիններ պարունակող արյան շիճուկ.

- 1) բնական ձեռքբերովի
- 2) բնական բնածին
- 3) արհեստական պասիվ
- 4) արհեստական ակտիվ

16

Մարդու օրգանիզմում վիտամինների գործառույթի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) մասնակցում են արյան մակարդմանը
- 2) նպաստում են օրգանիզմի աճին
- 3) հանդիսանում են էներգիայի աղբյուր
- 4) նպաստում են էրիքրոցիտների առաջացմանը

17

Ի-ՈՆԹ-ում նույնականացների ո՞ր եռյակն է համապատասխանում ԴՆԹ-ի ԱԹԳ եռյակին.

- 1) ՈՒԱՅ
- 2) ՈՒԱԳ
- 3) ԱՍՅ
- 4) ԱԹՅ

18

Ֆուտոսինթեզի մթնային փուլում ածխածնի օքսիդը ֆիքսվում է.

- 1) նիտրոգենազի միջոցով
- 2) ջրի միջոցով
- 3) ԱԵՖ-սինթազի միջոցով
- 4) ռիբուլոզարիֆուսիատ-կարբօքսիլազի միջոցով

19

Կորիզավոր բջջի ո՞ր կառուցվածքներում է սինթեզվում ԱԵՖ-ը.

- 1) քլորոպլաստներում և միտոքոնդրիումներում
- 2) միտոքոնդրիումներում և բջջակորիզում
- 3) ռիբոսոմներում և լիզոսոմներում
- 4) Գոլջիի ապարատում և բջջային կենտրոնում

20

Ո՞րն է պոլիսախարիդ.

- 1) էրիթրոզը
- 2) քսիլոզը
- 3) գալակտոզը
- 4) մանանը

21

Բոլոր ամինաթթուների մոլեկուլները նման են միմյանց կառուցվածքում առկա.

- 1) կարբօքսիլային խմբով և ռադիկալային խմբով
- 2) սուլֆիդային խմբով և ամինախմբով
- 3) կարբօքսիլային խմբով և ամինախմբով
- 4) ռադիկալային խմբով և ամինախմբով

22

Ո՞ր բաղադրիչներն են մտնում կորիզի կազմի մեջ.

- 1) կորիզակը, կորիզահյութը, էնդոպլազմային ցանցը և ԴՆԹ-ի մոլեկուլները
- 2) երկշերտ թաղանթը, ԴՆԹ-ի մոլեկուլները, կորիզահյութը և կորիզակը
- 3) քջաքաղանթը, ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի մոլեկուլները և միտոքոնորիումները
- 4) միաշերտ թաղանթը, ոիքոսումները, պլաստիդները, ցենտրիոլները և ԴՆԹ-ի մոլեկուլները

23

Նախակորիզավոր քջիջների ցիտոպլազմայում առկա են հետևյալ օրգանիոնները.

- 1) ոիքոսումները և վակուոլները
- 2) ոիքոսումները և էնդոպլազմային ցանցը
- 3) միտոքոնորիումները և Գ-ոլջիի ապարատը
- 4) էնդոպլազմային ցանցը և լիզոսումները

24

Մուտացիաների ո՞ր ձևին է պատկանում տրիստմիան.

- 1) պոլիպլոիդիա
- 2) անեուպլոիդիա
- 3) ինվերսիա
- 4) տրանսլոկացիա

25

Ո՞րն է կուսածնության առանձնահատկությունը.

- 1) օրգանիզմի զարգացումը բեղմնավորված ձվաբջջից
- 2) օրգանիզմի զարգացումը չբեղմնավորված ձվաբջջից
- 3) դուստր առանձնյակի առաջացումը մեկ ծնողական օրգանիզմի սոմատիկ քջից
- 4) օրգանիզմի զարգացումը ծնողական երկու առանձնյակների սոմատիկ քջիջների երկբջջային համալիրից

26

Ի՞նչ ֆենոտիպային առանձնահատկություն է դրսւորվում ոչ լրիվ դոմինանտության դեպքում.

- 1) ըստ ռեցեսիվ գենի հոմոզիգոտ առանձնյակները արտաքինից չեն տարբերվում ըստ դոմինանտ գենի հոմոզիգոտ առանձնյակներից
- 2) հետերոզիգոտ առանձնյակները ֆենոտիպով չեն տարբերվում ըստ ռեցեսիվ գենի հոմոզիգոտ առանձնյակներից
- 3) հետերոզիգոտ առանձնյակները ֆենոտիպով չեն տարբերվում ըստ դոմինանտ գենի հոմոզիգոտ առանձնյակներից
- 4) հետերոզիգոտ առանձնյակները արտաքինից տարբերվում են ըստ դոմինանտ գենի հոմոզիգոտներից

27

Ի՞նչ երևոյթ է ի հայտ գալիս հոմոզիգոտ և հետերոզիգոտ առանձնյակների միահիքքիդ խաչատրման արդյունքում.

- 1) երեք գենոտիպային խմբեր՝ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 2) միակերպություն ըստ գենոտիպի՝ անկախ դոմինանտուրյան բնույթից
- 3) երեք գենոտիպային խմբեր՝ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 4) երկու գենոտիպային խմբեր՝ անկախ դոմինանտուրյան բնույթից

28

Ինչի՞ է հավասար կանաչ գույնի հարք սերմեր ունեցող ոլորի հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) չորսի
- 2) մեկի
- 3) երկուսի
- 4) երեքի

29

Ի՞նչն է բնորոշ կոսմոպոլիտ տեսակներին.

- 1) ունեն տարածվածության նեղ արեալ
- 2) բնակվում են որոշ կղզիներում, ունեն տարածվածության փոքր արեալ և ընդգրկված չեն սննդային շղթաներում
- 3) արեալները տեղակայված են բոլոր մայրցամաքներում
- 4) տարածումը սահմանափակված է անհաղթահարելի խոչընդոտներով

30

Ո՞ր բակտերիաներն են ազոտն արտազատում մքնոլորտ.

- 1) նիտրիֆիկացնող
- 2) ազոտֆիքսող
- 3) ամոնիֆիկացնող
- 4) դենիտրիֆիկացնող

31

Ի՞նչ ազդեցություն չի բողնում խտության օպտիմալից պակաս նվազումը պոպուլյացիաների վրա.

- 1) բարձրացնում է նրա բեղունության աստիճանը
- 2) հանգեցնում է պոպուլյացիայի ոչնչացմանը
- 3) թուլացնում է նրա պաշտպանական ռեակցիան
- 4) իջեցնում է նրա բեղունության աստիճանը

32

Ի՞նչ երևոյթ է լույսի ազդեցության տակ կարտոֆիլի պալարի կանաչելը.

- 1) սեղոնային փոփոխականություն
- 2) մուտացիոն փոփոխականություն
- 3) աղապտիվ փոփոխականություն
- 4) ոչ աղապտիվ փոփոխականություն

33

Զրային էկոհամակարգերում որո՞նք են հիմնական պրոդուցենտները.

- 1) շերեփուկները և որոշ բակտերիաներ
- 2) խեցգետինները, ջրիմուռները և որոշ բակտերիաներ
- 3) ջրիմուռները
- 4) ձկները

34

Ո՞րն է իդիոտապտացիայի օրինակ.

- 1) կատվածկների մարմնի տափակացումը
- 2) ներքին բեղմնավորման ի հայտ գալը
- 3) երկկենցաղների եռախորշ սրտի առաջացումը
- 4) ողնաշարավոր կենդանիների հնգամատ վերջույթների առաջացումը

35

Ո՞ր բույսը մակարույծ չէ.

- 1) գաղճը
- 2) սարացենիան
- 3) օմելան
- 4) ռաֆիելիան

(36-37) Ծագանակագույն աչքերով և զանգուր մազերով տղամարդն ամուսնացավ շագանակագույն աչքերով և ուղիղ մազերով կնոջ հետ, որի հայրն ուներ երկնագույն աչքեր: Ծագանակագույն աչքեր պայմանավորող գենը դոմինանտում է երկնագույն աչքեր պայմանավորողի նկատմամբ, իսկ ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունենում է զանգուր մազեր, իսկ մյուսը՝ ուղիղ, և այդ հատկանիշները ժառանգվում են առոտոսմային շշդայակցված գեներով:

36

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի կինը.

- 1) aabb
- 2) Aabb
- 3) AaBb
- 4) AABB

37

Գտնել շագանակագույն աչքերով և զանգուր մազերով երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.

- 1) 1\4
- 2) 1\8
- 3) 0
- 4) 1\2

(38-39) Չափահաս մարդու մարմնի զանգվածը 80 կգ է, իսկ արյան խտությունը՝ 1,06 գ/մլ:

38 Սուտավորապես քանի^շ լիսոր արյուն ունի այդ մարդը.

- 1) 5,28-6,04
- 2) 3,71-4,45
- 3) 3,3-3,96
- 4) 4,62-5,19

39 Հաշվել ձևավոր տարրերի զանգվածը (կգ).

- 1) 2,38-3,06
- 2) 2,24-2,88
- 3) 1,96-2,52
- 4) 2,8-3,52

40 Խաչաներել են AABbCcDdEeFf x AaBbCcDDEeff գենոտիպերով առանձնյակներին: Ալելային գեների առաջին չորս գույզերում առկա է ոչ լրիվ դոմինանտություն, իսկ վերջին երկուսում՝ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր գույզերում: Գտնել սերմարում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 81
- 2) 36
- 3) 144
- 4) 72

41 Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի օրգանիզմի կառուցվածքի առանձնահատկության (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ապացույցների (նշված է աջ սյունակում) միջև: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

- | Կառուցվածքի առանձնահատկություն | Ապացույց |
|--|--------------|
| A. մարդու ականջախունջը շարժող մկաններ | 1. ոռողիմենա |
| B. մարդու պոչի առկայություն | 2. ատավիզմ |
| C. կույր օձերի վերջույթների մնացորդներ | |
| D. մարդու կույր աղիքի որդաննան ելուստ | |
| E. մրջնակերների ատամներ | |
| F. վիշապների վերջույթների մնացորդներ | |
| G. մարդու լրացուցիչ պտուկներ | |
| H. մարդու երրորդ կոպի մնացորդ | |

42 Օրգանիզմի ո՞ր սեռին (նշված է ձախ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

- | Օրգանիզմի սեռը | Բնութագիր |
|-----------------------------------|----------------|
| A. ծղրիդի իգական սեռը | 1. հետերոգամետ |
| B. պոչավոր երկկենցաղի իգական սեռը | 2. հոմոգամետ |
| C. մարդու իգական սեռը | |
| D. թիթեռի արական սեռը | |
| E. թռչունի իգական սեռը | |
| F. դրոզոֆիլ պտղաճանճի արական սեռը | |

43 Ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) էուկարիոտ բջջի կենսական ցիկլի ո՞ր փուլում է (նշված է աջ սյունակում) իրականանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

- | Գործընթաց | Կենսական ցիկլի փուլ |
|---|---------------------|
| A. բջիջն աճում է՝ հասնելով մայրական բջջի չափսերին | 1. մետաֆազ |
| B. քրոմատիդների տարամիտում դեպի բջջի բնեոններ | 2. անաֆազ |
| C. քրոմոսոմների դասավորում իլիկի հասարակածային հարթության վրա | 3. G_1 |
| D. մատրիցային սինթեզ ԴՆԹ-ի երկու շղթաների վրա | 4. S |
| E. բաժանման իլիկի թելիկները կազմող սպիտակուցների սինթեզ | 5. G_2 |
| F. ԴՆԹ-ից տեղեկատվության արտագրման դադարում | 6. ալրոֆազ |
| G. ցենտրիուլների կրկնապատկում | |

44

Բջջի ո՞ր օրգանիզը (նշված է ձախ սյունակում) ի՞նչ կառուցվածքային առանձնահատկություն (նշված է աջ սյունակում) ունի: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բջջի օրգանիզ

Կառուցվածքային
առանձնահատկություն

- A. ռիբոսում
- B. քլորոպլաստ
- C. բջջակենտրոն
- D. միտոքոնդրիում
- E. Գոլցիի ապարատ
- F. հարք էնդոպլազմային ցանց
- G. վակուոլ

- 1. ունի երկու քաղանք
- 2. քաղանք չունի
- 3. ունի մեկ քաղանք

45

Մարդու կմախսքի ո՞ր ուսկրերի միացումները (նշված է ձախ սյունակում) միացման ո՞ր տեսակին են (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Ոսկրեր

Միացման տեսակ

- A. ստորին ծնոտի միացում քունքոսկրերին
- B. կող և ող
- C. գանգի ուղեղային քաժնի
- D. ստորին վերջույթների գոտի
- E. կրծքային քաժնի ողեր
- F. կոնքոսկր և ազդոսկր
- G. կող և կրծոսկր
- H. թիակոսկր և քազկոսկր

- 1. կիսաշարժուն
- 2. շարժուն
- 3. անշարժ

46

Մարդու օրգանիզմում ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում ճարպերի փոխակերպման գործընթացները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ճարպերի ներթափանցում արյան մեջ
2. ճարպերի ճեղքում մարսողական ֆերմենտների ազդեցությամբ
3. ճարպերի կուտակում ենթամաշկային բջջանքում
4. ճարպաթրուների և գլիցերինի ներթափանցում քարակ աղիների թափիկների պատը կազմող քջիջներ
5. ճարպերի ներթափանցում ավշային մազանոքներ
6. քարակ աղիների թափիկների էպիթելի բջջներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ

47

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու տեսողական վերլուծիչի գործառույթի իրականացման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ցանցարադանքի ընկալական բջիջների գրգռում
2. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսազնդերի կեղև
3. լույսի ճառագայթների բեկում ակնաբյուրեղով անցնելիս
4. լույսի ճառագայթների անցում աչքի խցիկների հեղուկով
5. լույսի ճառագայթների արտացոլում առարկայի մակերևույթից
6. լույսի ճառագայթների անցում եղջերաբադանքով
7. տեսողական զգայության ձևավորում

48

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում ցուրտ պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մաշկ մղվող արյան ծավալի նվազում
2. մաշկի սառնության ընկալիչների դրդում
3. մաշկի արյունատար անորթների նեղացում
4. ջերմատվության թուլացում
5. արտաքին միջավայրի ջերմաստիճանի նվազում
6. ջերմակարգավորման կենտրոնի դրդում

49

Ինչպիսի՞ն է առաջնային և երկրորդային մեզի հաջորդական ուղին մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. միզապարկ
2. պատիճ
3. երիկամի ավագան
4. ոլորուն խողովակներ
5. բուրգի (փոքր բաժակի) գագաթ
6. միզուկ
7. մեզը հավաքող խողովակ
8. միզածորան

50

Ինչպիսի՞ն է աճման գոտի անցած բջջի հետ կատարվող վերափոխումների հաջորդականությունը գամետոգենեզի ընթացքում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. քրոմոսոմների տարամիտում
2. n2c հալաքակազմով բջիջների առաջացում
3. նուկլեոտիդների միջև կովալենտ կապերի խզում
4. հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա
5. սպերմատիդների առաջացում
6. քրոմատիդների տարամիտում
7. ԴՆԹ-ի քանակի կրկնապատկում

51

Ինչպիսի՞ն է կատարոլիզմի ընթացքում տեղի ունեցող պրոցեսների հաջորդականությունը.

1. մարսողական վակուոլի առաջացում
2. միտոքոնդրիումում ԱԵՖ-ի առաջացում
3. պիրոխաղողաբթվի և թթվածնի անցում միտոքոնդրիումներ
4. բարդ օրգանական նյութերի ճեղքում
5. ֆազոցիտոզի միջոցով սննդային մասնիկի անցում բջիջ
6. պարզ շաքարի ճեղքում
7. սննդային մասնիկի միաձուլում լիզոսումի հետ

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ճարպերը մասնակցում են մարդու մակերիկամների հորմոնների կենսասինթեզին
2. հատիկավոր էնրոպլազմային ցանցով հարուստ են ենթաստամոքսային գեղձի, թքագեղձերի բջիջները
3. ջրի փոքր չափերի և դիպոլային հատկությունների հաշվին ջրի մոլեկուլները միանում են իրար կովալենտ կապերի միջոցով
4. ԴՆԹ-ի մեկ շղթայում նուկլեոտիդները միմյանց են միանում մեկ նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի և մյուսի ածխաջրային մնացորդի միջև առաջացող կովալենտ կապով
5. ԴՆԹ-ի կազմում հանդիպող պուրինային ազոտական հիմքերն ունեն միզաքթվի նման կառուցվածք
6. պլազմային թաղանթով նյութերի տեղափոխումը ցածր խտությունից դեպի բարձրը կատարվում է առանց արտաքին էներգիայի ծախսի

53

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

1. աջ թոքը փոքր է և կազմված է երկու բլթերից, իսկ ձախը՝ երեք բլթերից
2. թոքերը ծածկված են շարակցական հյուսվածքի թաղանթով՝ թոքամզով, որը կազմված է թոքային թոքամզային և մերձապատային թոքամզային թաղանթներից
3. խոսելիս ձայնախորշը լայնանում է, լրելիս՝ նեղանում
4. մակլուկորդով կոկորդի փակվելու ժամանակ շնչափողով անցնում է օդը, բաց վիճակում՝ սննդային գնդիկը
5. կոկորդի խոռոչի ամենանեղ տեղում ձգվում են ձայնալարերը
6. միջկողային և ստոծանու մկանների թուլացման ժամանակ կողոսկը երև ու ստոծանին իջնում են և տեղի է ունենում արտաշնչում
7. քրի խոռոչից օդը քթրմպանով ներթափանցում է կոկորդ

54

Նշել լրիվ կերպարանափոխությամբ զարգացող միջատներին բնորոշ բոլոր ճիշտ պնդումները.

1. սեռահասուն միջատի և քրթուրի միջև առկա է ներտեսակային պայքարը
2. հետսաղմնային զարգացումն ուղղակի է և ընթանում է 4 փուլով
3. բաժանասեռ են, ունեն ներքին քեղմնավորում
4. ձվից դուրս եկած քրթուրը նման է օղակավոր որդի, ունի կրծող բերանային ապարատ
5. լրիվ կերպարանափոխությամբ զարգանում են խավարասերները
6. լրիվ կերպարանափոխությամբ զարգանում են մրջյունները

55

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. Էկոհամակարգում ռեղուցենտրներն իրականացնում են քարտ օրգանական միացությունների քայլայում մինչև պարզ անօրգանական միացություններ
2. բնական ընտրությունը փոփոխության ենթարկված օրգանիզմների կողմից գիտակցական ընտրություն է
3. մակրոէվոլյուցիայի հիմքում ընկած են ժառանգական փոփոխականությունը, գոյության կրիվը, բնական ընտրությունը
4. բնական ընտրությունն ունի ուղղորդված բնույթ
5. կենդանի օրգանիզմները չեն կարող գոյություն ունենալ թրոպոսֆերայում և ստրատոսֆերայի ստորին շերտերում
6. նավթը, հողը, կրային ապարները դասվում են հանքային նյութերի շարքին

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. հապլոիդներն ավելի խոշոր են, քան դիպլոիդ ձևերը, քանի որ գեների թվաքանակի մեծացման պատճառով նրանց քջիջներն ավելի մեծ չափսեր ունեն
2. գորտի ձվաբջիջի տրոհման փուլում անիմալ բևեռի քջիջներն ավելի հաճախ են կիսվում, քան վեգետատիվ բևեռի քջիջները
3. ցիտոպլազմային ժառանգականությունը կապված է քլորոպլաստների և միտոքոնդրիումների ԴՆԹ-ի հետ
4. դրոզոֆիլի աչքի գույնն առատոսմային հատկանիշ է, և այն պայմանավորող գենը գտնվում է Y քրոմոսոմում
5. հիպերտրիխոզը առատոսմային քրոմոսոմով ժառանգվող հատկանիշ է
6. Էկտոդերմից սաղմնային զարգացման ընթացքում ձևավորվում են մկանները, նյարդերը, աղիները, երիկամները

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ակտինը և միոզինը մկաններում կազմավորում են մկանաթելիկներ և ապահովում են մկանների կծկումը
2. բջջում ԱԵՖ չի պահեստավորվում
3. կորիզահյութի քիմիական կազմը չի տարբերվում ցիտոպլազմայի բաղադրությունից
4. մեյոզի առաջին և երկրորդ բաժանումների միջև ընկած ժամանակաշրջանում՝ ԴՆԹ-ն չի կրկնապատկում
5. պերօքսիտոմներում կատարվում է նյութերի օքսիդացում
6. գենետիկական գաղտնագիրն օժտված է ավելցուկայնությամբ, քանի որ նույնականացնելու համար կարող է կողավորել 1-6 ամինաթթուների
7. Վիրուսներում առկա է սախտակուցների սինթեզման յուրահատուկ համակարգ

Նշել հասուն գորտի կմախքին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. քարը կրում է լողաբանաթներով միմյանց միացած հինգ մատներ
2. ողնաշարը կազմված է չորս բաժիններից՝ պարանոցային, իրանային, սրբանային և պոչային
3. պարանոցային և սրբանային բաժիններն ունեն մեկական ող
4. դաստակը կազմված է հինգ մատներից
5. ողնաշարի իրանային բաժնի ողերի միջոցով կոնքագոտին միանում է ողնաշարին
6. ողնաշարի իրանային բաժնի ողերը կրում են կողեր

- (59-61) $2,7054 \cdot 10^{-12}$ գ զանգվածով բակտերիայի բջջում պարունակվում է 15000 ռիբոսոմ, որոնց ընդհանուր զանգվածը կազմում է բակտերիայի զանգվածի 3%-ը:

59

Քանի՞ դալտոն է կազմում մեկ ռիբոսոմի միջին զանգվածը: Հաշվի առնել, որ 1 դալտոնը հավասար է $1,67 \cdot 10^{-24}$ գ: Պատասխանը բաժանել 1000-ի:

60

Սպիտակուցի քանի՞ մոլեկուլ կա մեկ ռիբոսոմում, եթե սպիտակուցի միջին մոլեկուլային զանգվածը 30000 դալտոն է և սպիտակուցների ընդհանուր զանգվածը կազմում է ռիբոսոմի զանգվածի 50%-ը:

61

Քանի՞ նուկլեոտիդից է բաղկացած ռիբոսոմի սպիտակուցը կողավորող գենը, եթե մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 120 դալտոն է:

(62-63) Գլուկոզի ճեղքումից հետո օրգանիզմում մնացել է 14 մոլ կաթնաքրու, և առաջացել է 48 մոլ CO₂:

62 Քանի՞ մոլ ջուր է առաջացել անքավածին փուլում:

63 Քանի՞ մոլ գլյուկոզ է ճեղքվել այդ ընթացքում:

64 Զերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է ջերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ ջերմության 20%-ը: Օրվա ընթացքում ջերմահաղորդմամբ մարմնից հեռացել է 551,25 կՋ էներգիա, իսկ մարմնի մակերեսը 2 մ² է: Քանի՞ միլիգրամ քրտինք գոլորշիացավ մաշկի 1 սմ² մակերևույթից, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

(65-66) Էկոհամակարգում ընդգրկված են սննդային չորս մակարդակներ՝ պրոդուցենտներ - I կարգի կոնսումենտներ - II կարգի կոնսումենտներ - III կարգի կոնսումենտներ: III կարգի կոնսումենտների կուտակած գումարային էներգիան 7500 կՋ է:

65

III կարգի քանի^o կոնսումենտ կարող է սնվել տվյալ էկոհամակարգում, եթե մեկ առանձնյակի զանգվածը 0,5 գ է և 1 գ զանգվածում կուտակվում է 40 կՋ էներգիա:

66

Զանի միջոն կՋ էներգիա է անցել էկոհամակարգ, եթե համակարգի համար էներգիայի միակ աղբյուր է հանդիսանում արեգակնային ճառագայթումը և ֆուտոսինթեզի արդյունավետությունը 1,6% է: Յուրաքանչյուր սննդային մակարդակում կուտակվում է օգտագործված սննդի էներգիայի 12,5%-ը:

- (67-68) Օրվա ընթացքում մարդն արքուն է եղել 18 ժամ, ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 5 ժամ:

67

Չանի^o լիտր քրվածին է յուրացվել օրգանիզմում մեկ օրվա ընթացքում, եթե աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագանում են 2 անգամ, շնչառական ծավալը՝ 1,6 անգամ, իսկ յուրացվող քրվածնի ծավալն աճում է 25%-ով: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում:

68

Չանի^o լիտր արյուն է ստացել երիկամը մեկ օրվա ընթացքում, եթե աշխատանքի ընթացքում սրտի մեկ կծկման ժամանակ փորոքից մղված արյան ծավալը մեծացել է 2, իսկ սրտի կծկումների հաճախականությունն ավելացել է 1,5 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում սրտի բոլորաշրջանը տևում է 0,8 վայրկյան, մեկ կծկման ժամանակ փորոքից մղված արյան ծավալը 70 մլ է և երիկամներ է հասնում առրտա մղված արյան ծավալի 20%-ը:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Կրոսինգովերի հետևանքով տեղի է ունենում քրոմոսոմների թվի կրկնակի պակասում
2. մարդու մաշկի գույնի ժառանգումը գեների պոլիմերային ազդեցության օրինակ է
3. կատուների մարմնի գունավորումը Y քրոմոսոմին շղթայակցված հատկանիշ է, և խայտարդետ լինում են միայն արու կատուները
4. ակվարիումային գուազի ձկնիկի պոչալողակի գունավորումը Y քրոմոսոմի հետ շղթայակցված հատկանիշ է
5. Մենդելի երրորդ օրենքը վերաբերում է միայն այն հատկանիշների ժառանգմանը, որոնց պայմանավորող գույգ ալելային գեները գտնվում են տարբեր գույգ հոմոլոգ քրոմոսոմներում
6. Էպիստազն ալելային տարբեր գույգերի միջև փոխներգործության եղանակ է, երբ մեկ գենի ալելները ճնշում են մեկ այլ ալելային գույգի գործունեությունը

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Ենթատեսաքննություն տեղադրված են կենտրոններ, որոնք վերահսկում են ներքին միջավայրի բաղադրությունը
2. ճշգրիտ շարժումների գոտին գտնվում է մեծ կիսագնդերի կեղևի ճակատային բլթում
3. լեզվի համազգաց ընկալիչներում առաջացած ազդակներն հաղորդվում են անմիջապես տեսաքրումք, որտեղից էլ մեծ կիսագնդերի կեղևի զագաթային բիլթ
4. ականջի և աչքի ընկալիչներից նյարդային ազդակներն ուղարկվում են երկարավուն ուղեղ, ապա ուղեղաբնով հասնում տեսաքրմբի համապատասխան կենտրոններ
5. պարասիմպաթիկ նյարդային համակարգի նախահանգուցային նյարդաթելերն ավելի երկար են, քան հետհանգուցայինները
6. Վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժնի գրգռումն ակտիվացնում է լեղու արտադրությունը